Ազգ
Azg
31 ՕԳՈՍՏՈՍ 2013 ՇԱԲԱԹ 144(5227)
ISSN: 1829-1651

# Սարգսյան-Պուտին հանդիպում

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի գրասենյակից հայտնում են, որ սեպտեմբերի 3-ին Հայաստանի նախագահը կհանդիպի Ռուսաստանի դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի հետ:

Բանակցությունների ընթացքում նախատեսվում է երկկողմ օրակարգի հիմնական հարցերի շուրջ մտքերի փոխանակում, ներառյալ՝ քաղաքական, առեւտրատնտեսական, էներգետիկ եւ հումանիտար ոլորտներում փոխգործակցությունը:

Ենթադրվում է նաեւ ԱՊՀ տարածքում ինտեգրացիոն գործընթացների եւ Հարավային Կովկասում անվտանգության եւ կայունության ապահովմանը վերաբերող հարցերի քննարկում:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

# Հակասիրիական կոալիցիան չի՛ փլուզվել

Երեկ, օրվա ընթացքում, միջազգային շրջանակներում հակասիրիական կոալիցիայի փլուզման մասին տարածված լավատեսական լուրերին հաջորդեց, արդեն երեկոյան, նախորդ օրերին տիրապետող հոռետեսությունը, թե, այնուամենայնիվ, Մ. Նահանգները, Ֆրանսիան, Թուրքիան եւ, անշուշտ, Իսրայելը ավելի քան վճռական են քիմիական զենքի առկայության ու կիրառման պատրվակով Սիրիային ռազմածովային եւ օդային հարվածներ հասցնելու իրենց ծրագիրը իրականացնելու գործում:

Երեկվա լավատեսության պատճառը Մեծ Բրիտանիայի խորհրդարանի որոշումն էր՝ ո՛չ ռազմական գործողություններին: Նկատի ունենալով նախկին վարչապետ Թոնի Բլերի ստախոսությունները եւ հատկապես 2003 թ. իրաքյան խարդավանքը, խորհրդարանն արգելեց կառավարությանը ռազմական որեւէ քայլ ձեռնարկել Սիրիայի դեմ: Բրիտանական խորհրդարանի զույգ պալատներում հարցը դրվեց հստակ ու մեկին՝ ո՞րն է նպատակը հակասիրիական ռազմական հարվածների, ի՞նչ է շահում սիրիացի ժողովուրդը այդ հարվածներից եւ, երրորդ, ի՞նչ երաշխիքներ կան, որ այդ հարվածներից չեն օգտվի Ասադի վարչակարգի դեմ կռվող բազմատարր խմբավորումների մեջ ազդեցիկ տեղ գրավող Ալ-Ղաիդան եւ ահաբեկչական մյուս խմբերը: Եվ վարչապետ Կամերընի պերճախոսությունը այս անգամ բավարար չեղավ տարհամոզելու պատգամավորներին: Եվ նրա ռազմատենչ bravado-ն վերածվեց ափսոսանքի մրմունջի...

Բրիտանացի պատգամավորների դիրքորոշումը հույս էր ներշնչել բոլորին, որ Մ. Նահանգների գլխավոր եւ հզոր դաշնակցի այդ հետքայլը ազդանշան է հակասիրիական կոալիցիայի փլուզման:

Սակայն խաղաղասիրական շրջանակների այդ հուսադրման վրա սառը ցնցուղի տպավորություն թողեց, արդեն հետմիջօրեին, Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հայտարարությունը, թե իր երկրի դիրքորոշումն անկախ է Բրիտանիայից եւ, խնդրին հաղորդելով ֆրանսիական ոճ՝ քիմիական զենքի առկայության խնդիրը տեղափոխեց բարոյական հարթություն, խոստանալով պատժել Ասադի վարչակարգին... մարդասիրական նկատառումներով:

Սակայն Սիրիային սպասվող դժխեմ ճակատագիրը ավելի հստակ ուրվագծվեց ավելի ուշ, արդեն գիշերը, երբ Մ. Նահանգների պետքարտուղար Ջոն Քերին հանդես եկավ հստակ հայտարարություն-պատճառաբանությամբ, վկայակոչելով ամերիկյան հետախուզական ծառայությունների տվյալները ու Օբամայի վարչակազմի եզրակացությունը՝ նախագահ Ասադի զորքերն են, նախօրոք ծրագրված գործողությամբ, քիմիական լիցքով հրթիռներ արձակել Դամասկոսի մոտ Ղոթայի շրջանում, սպանելով 1430 քաղաքացի, որոնցից շուրջ 400-ը՝ երեխաներ: Հանդես գալով բոցաշունչ ճառով, պետքարտուղարը շեշտեց, չսպասելով ՄԱԿ-ի տեսուչների այսօր հայտարարելիք եզրակացությանը, անգամ քամահրալից շեշտելով, որ տեսուչներին մանդատ չի տրված որոշելու, թե ո՞ր կողմից են արձակվել մահաբեր ռումբերը, ու նշելով նաեւ, թե կարիք չկա սպասելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի եզրակացությանը, քանզի այնտեղ կրկին սպասվում է Ռուսաստանի «օբստրուկցիոնիստական» վետոն, եւ հստակ ու մեկին հայտարարեց, որ նման հարցերում Մ. Նահանգներն իր շահերից բխող անկախ որոշումներ առնելու իրավունք ունի, ապավինելով նաեւ իր հավատարիմ դաշնակիցներ Ֆրանսիայի, Թուրքիայի, Իսրայելի ու մյուսների օժանդակությանը: Նա խուսափեց Մեծ Բրիտանիայի անունը նշելուց ու բրիտանացիների մեծամասնության կարծիքի արտահայտիչ խորհրդարանի կեցվածքը մեկնաբանելուց, անգամ այդ կապակցությամբ ափսոսանք արտահայտելուց:

Այսպիսով, ամերիկյան արմադան անհամբեր սպասում է նախագահ Օբամայի հրահանգին, այսինքն՝ տարածաշրջանային նոր աղետի...

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Անհասկանալի իշխանություն եւ ընդդիմություն

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



Մեր երկրում ինչ-որ անհասկանալի գործընթացներ են տեղի ունենում, որը հասկանալու համար որեւէ մեկը, բացի տնտեսությունն ու քաղաքական դաշտն իմանալուց, պետք է աճպարարությունները բացահայտելու հմտություններ ունենա, նվազագույնը՝ սեկա խաղալ իմանա, գումարած՝ ճանաչի բոլոր կլանները եւ նրանց տանիքները, տեղյակ լինի նրանց ունեցվածքից ու հարստության չափից, իմանա՝ ո՞ւմ է պատկանում այս կամ այն տեսակետը տարածող լրատվամիջոցը եւ այլն: Այդ եւ բազմաթիվ այլ տեղեկություններով օժտված մարդը միայն կարող է հասկանալ՝ ի՞նչ է կատարվում Հայաստանում, ինչու է ծագում բողոքի այս կամ այն ալիքը, ինչին ի՞նչ է հաջորդում, կամ այս խառնաշփոթի մեջ ո՞վ ո՞ւմ բարեկամն է, ո՞վ ո՞ւմ կողմնակիցն է, ո՞վ ինչ է ուզում, ի՞նչ նպատակ հետապնդում: Իսկական քաոս: Նույնիսկ՝ ոչ կառավարելի քաոս, արեւմտյան քաղտեխնոլոգների սիրած կառավարելի քաոսի հակառակը: Հենց անկառավարելի քաոս է, համենայն դեպս՝ մեր ժողովրդի լայն հատվածների համար: Ժողովուրդը վաղուց կորցրել է լաբիրինթոսի այն թելը, որը բռնած պետք է հետ գնար՝ չմոլորվելու ու սեփական երկրի վերին շերտերի մտքինը հասկանալու համար: Մեր հանրային կյանքն այդ անթել լաբիրինթոսն է հիշեցնում: Մինչդեռ լայն հանրությունը կուզենար տեղյակ լինել գլխին գալիքի, այս կամ այն կենսական հարցում Հայաստանի իշխանության տրամաբանական եւ կանխատեսելի քայլերի, արտաքին ոլորտում՝ Հայաստանի գնալիք ճանապարհից վաղօրոք եւ առաջին ձեռքից: Մի խոսքով՝ իշխանությունն իր քայլերը պետք է աներ՝ տեղեկացնելով ժողովրդին ամեն առարկայական հարցի վերաբերյալ, հիմնավորեր եւ բացատրեր օգուտ-վնասը, քանզի իշխանությունը, եթե ընտրվում է ժողովրդի կողմից, հենց միայն նրա համար է, որ հաշվետու լինի իր քաղաքացիներին, նրան տեղյակ պահելով աշխատի նրա համար: Մինչդեռ Հայաստանում հասարակությունը ոչնչից լիովին ու նույնիսկ մասամբ տեղեկացված չէ, ոչինչ չգիտե իրեն վերաբերող հարցերի մասին, իսկ նրա մտածող եւ վերլուծող մասն ամեն օր ստիպված է իշխանության քայլերի վերաբերյալ բարդ ռեբուսներ լուծել, ամենազարմանազան ենթադրություններ անել՝ փորձելով հասկանալ ինչին ի՞նչ է հաջորդում եւ ինչո՞ւ: Իմիջայլոց, դա վերաբերում է ինչպես իշխանությանը, այնպես էլ կուսակցություններին՝ իշխանական եւ ընդդիմադիր հավասարապես:

Տես էջ 3

# Նստացույց ու պիկետ «Փակ շուկայի» տարածքում

Այսօրվանից բողոքի ակցիաներ կսկսվեն, որոնց նպատակն է ստիպել իշխանություններին՝ պահպանել 60-ականների ամենագեղեցիկ կառույցներից մեկը՝ «Փակ շուկան»: Թեպետ երկու տարվա պայքարը որեւէ արդյունք չի տվել, սակայն ակցիայի կազմակերպիչներն ու մասնակիցները չեն հուսահատվում. «Կպայքարենք մինչեւ վերջ եւ չենք հանգստանա, մինչեւ կառույցի նախկին



տեսքը չվերականգնվի», հայտարարել են կազմակերպիչները:

Ճարտարապետ Սաշուր Քալաշյանը, որ երկու տարի շարունակ շուկայի ճակատագրով դիմել է ամենատարբեր ատյաններին, այսօր խոստովանում է, որ իրենց բողոքներն ընդամենը գնացել, դեմ են առել «սեփականատեր» կոչված պատին ու հետ եկել: Նրա գնահատմամբ՝ սեփականատերը առանց որեւէ հիմքի հանդես է գալիս ե՛ւ որպես պետական մարմին, ե՛ւ ճարտարապետ, ե՛ւ շինարարության վերահսկող ու նաեւ դատախազ: «Դա պետականություն չունենալու հետեւանք է», հավելում է նա: Թեպետ շուկան արդեն այլանդակված վիճակում է, սակայն ճարտարապետը հույս ունի, որ հանրության համախմբվածությամբ գուցե հուշարձանը հնարավոր լինի փրկել:

Տես էջ 2

# Եվրոմիությո՞ւն, թե՞ Մաքսային միություն. Ուկրաինան կորոշի հանրաքվեով

Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, Ուկրաինայի նախագահ Վիկտոր Յանուկովիչը հայտարարել է, որ Եվրոմիությանը կամ Մաքսային միությանը երկրի անդամագրվելը կորոշվի հանրաքվեով: Այդ մասին նա ասել է ուկրաինական հեռուստաալիքներին տված հարցազրույցներում, որը հեռարձակվել է օգոստոսի 30-ին:



«Եվրոպական միությանը կամ Մաքսային միությանը Ուկրաինայի անդամակցության հարցն անպայման կորոշի ժողովուրդը հանրաքվեի միջոցով: Երբ կլինի այն, մենք չգիտենք: Բայց անպայման կլինի: Երբ Եվրոպական միություն կամ Մաքսային միություն մտնելու որոշումն ընդունվի, այդ ժամանակ ամեն դեպքում խնդիրն առանց հանրաքվեի չի լուծվի»,- հայտարարել է Յանուկովիչը:

Հարցազրույցի ընթացքում Ուկրաինայի նախագահն անդրադարձել է նաեւ գազի գնի նվազեցման շուրջը Ռուսաստանի հետ ընթացող բանակցություններին: Նա նշել է, որ այդ կապակցությամբ Կիեւը «նվաստացուցիչ առաջարկություններ» է ստանում:

Վ. Յանուկովիչը հայտարարել է, որ Ուկրաինան 20 մլրդ դոլար է կորցրել Ռուսաստանի հետ կնքած գազի պարտավորագրից:

# ԱՄՆ հատուկ ծառայությունների «սեւ բյուջեի» մասին

## Հետախուզության ծախսերն այժմ ավելին են, քան «սառը պատերազմի» ժամանակ

Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» թերթը առաջին անգամ հրապարակել է ԱՄՆ հատուկ ծառայությունների այսպես կոչված «սեւ բյուջեի» ծախսերի հոդվածները՝ վկայակոչելով ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենից ստացած փաստաթղթի պատճենը:

178-էջանոց գաղտնի փաստաթուղթը պարունակում է ամերիկյան հատուկ ծառայությունների հաշվետվությունները առաջիկա եւ անցկացված գործողությունների մասին, որոնց համար նրանք ֆինանսավորում էին խնդրում Կոնգրեսից:

Տես էջ 5

# Կստեղծվի Գյումրու էկոլոգիական քարտեզ

Գիտությունների ազգային ակադեմիայի էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնագետները Գյումրու տարածքի էկոլոգիական իրավիճակի համալիր հետազոտություն կկատարեն: Հետազոտության արդյունքների հիման վրա մեկ տարի հետո հանրապետության երկրորդ քաղաքը կունենա էկոլոգիական քարտեզ եւ անձնագիր:

Աշխատանքների մեկնարկից առաջ, օրերս տեղի է ունեցել հիշյալ լաբորատորիայի եւ Շիրակի մարզկենտրոնի քաղաքապետարանի աշխատակիցների հանդիպումը, որին մասնակցել է Գյումրու բնապահպանական տեղեկատվության «Օրհուս» կենտրոնի համադասող **Գեւորգ Պետրոսյանը**: «Դեռ անցած տարվա նոյեմբեր ամսին,- «**Ազգի**» թղթակցին ասաց «Օրհուս» կենտրոնի ղեկավարը,- մենք դիմել էինք նշված գիտական կենտրոնին՝ Գյումրիում հողի, ջրի, օդի երկրաքիմիական հետազոտություններ իրականացնելու խնդրանքով եւ ստացել նրա համաձայնությունը: Այնուհետեւ այդ աշխատանքներին բազմակողմանի աջակցության պատրաստակամություն է հայտնել նաեւ քաղաքապետարանը, տրամադրել անհրաժեշտ տեղեկատվական եւ այլ նյութեր»:

Գ. Պետրոսյանի խոսքերով, 1988 թվականից այս կողմ Գյումրու տարածքում ռեժիմային ոչ մի մոնիտորինգ կատարված չէ: Այս աշխատանքների ընթացքում նախ քաղաքի տարբեր հատվածներում հողից հարյուրին մոտ նմուշներ են վերցվելու, որոնց մեջ ստուգվելու են մի քանի պարամետրեր՝ մարդու առողջության համար վտանգավոր, շրջակա միջավայրի բաղադրիչների վրա բացասաբար ազդող ծանր մետաղների, իոնների քանակը եւ այլն, որոնք կբնութագրեն այդ շրջակա միջավայրի որակը: Կազմված քարտեզում ցույց է տրվելու, թե քաղաքի որ հատվածը ինչ նյութերով ու ինչ չափով է աղտոտված կամ մաքուր: Սա շատ լավ հիմք է հանդիսանալու, որ հետագայում կարելի լինի, օրինակ, իրականացնել Գյումրի քաղաքի տարածքի ֆունկցիոնալ կանաչապատման նախագիծ:

Բացի դրանից, կատարվելու է ջրերի նախնական հետազոտություն, քաղաքի տարածքով հոսող երեք գետակներից վերցվել են նմուշներ մինչեւ քաղաք մտնելը, քաղաքի սահմաններում եւ այնտեղից ելքի հատվածներում, որոնց հետազոտությունը ցույց կտա, թե բնակավայրն ինչպես է ազդում իր տարածքով անցնող ջրերի, դրանց որակի վրա:

Տարբեր տեղամասերում վերցվել են նաեւ օդի նմուշներ՝ այնտեղ փոշու պարունակությունը որոշելու համար: Եթե «Հայէկոմոնիտորինգ»-ի լաբորատորիան առ այսօր Գյումրի քաղաքի տարածքի միայն մեկ կետում է վերցնում օդի նմուշ, որը բավարար չէ, հիմա այս ծրագրով քաղաքի մի քանի տարածքներում են նմուշներ վերցվելու, որոնց հետազոտությամբ առավել հստակ կորոշվի այստեղ օդի աղտոտվածության մակարդակը:

Քաղաքի տարածքի շրջակա միջավայրի համեմատաբար հստակ նկարագրի առկայությունը բազմաթիվ գործնական խնդիրներ ավելի ճիշտ լուծելու հիմք կարող է լինել: Գեւորգ Պետրոսյանի փոխանցմամբ, նման հետազոտություններից հետո Երեւան քաղաքի տարածքում, օրինակ, գյուղատնտեսական նշանակության հողերն ընդհանրապես հանվել են շրջանառությունից՝ դրանց մեջ ծանր մետաղների քանակության պատճառով, որոշ մանկապարտեզների տարածքներում նույն խնդրով պայմանավորված մինչեւ իսկ շինարարական փոփոխություններ են կատարվել: Հուսանք, ասաց բնապահպանը, որ Գյումրիում մեր շրջակա միջավայրը բավական մաքուր է, ինչը կարող է այստեղ նաեւ զբոսաշրջության զարգացման խթան դառնալ:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում բացվել են «Մութ ու Լույս աշխարհի» դռները

*Առաջին անգամ Հայաստանի թանգարանային պատմության մեջ՝ Հ. Թումանյանի տուն-թանգարանում ստեղծվել է 3D տեխնոլոգիայով կահավորված սրահ*





Ռալֆ Յիրիկյանի ընտանիքի հանգանակությամբ Հ. Թումանյանի տուն-թանգարանում բացվել են «Մութ ու Լույս աշխարհ» սրահի դռները: 3D տեխնոլոգիայով կահավորված սրահում փոքրիկ այցելուները կարող են դիտել «Ջախորդ Փանոսը» հեքիաթը եւ ականատեսից մասնակից դառնալ դրա գործողություններին: «Ջախորդ Փանոսը» «Մութ ու Լույս աշխարհում» ներկայացված առաջին անիմացիոն ֆիլմը կլինի, որին ժամանակի ընթացքում կավելանան հեքիաթային այլ «աշխարհներ»:

«Մութ ու Լույս աշխարհ» սրահի կահավորման եւ անհրաժեշտ սարքավորումներ ձեռք բերելու համար Յիրիկյան ընտանիքը հանգանակել է 10000 ԱՄՆ դոլար:

Սրահի շնորհանդեսի հանդիսավոր բացումը կատարեցին Նարեկ եւ Սարին Յիրիկյանները եւ նրանց հյուրերը՝ Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի սաները:

«Մեր ընտանիքի՝ մասնավորապես Նարեկի եւ Սարինի մաղթանքն է բոլոր մանուկներին, որ նրանց մեջ հավերժ ապրի հեքիաթը. եթե մարդը հավատում է հրաշքների, ուրեմն նա բարի, լավատես եւ արդար է: Մենք ուրախ ենք, որ երեխաներն այժմ կարող են դիտել Թումանյանի՝ խորը իմաստ կրող հեքիաթները նոր տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչն էլ ավելի տպավորիչ եւ հիշվող կլինի նրանց համար»,-նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

Ի դեպ, Հ. Թումանյանի տուն-թանգարանը թողարկել է «Մութ ու Լույս աշխարհի» 100 դրամ արժողությամբ բարեգործական տոմսակներ, որոնց վաճառքից գոյացած գումարը կփոխանցվի «Նվիրիր կյանք» հիմնադրամին:

ՎԻՃԵԼԻ

# Կքննարկվի օդանավակայանի հին շենքի ճակատագիրը

Ամիսներ առաջ «**Ազգ**» օրաթերթը տեղեկացրել էր, որ «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերությունը դիմել է քաղաքապետարանին «Զվարթնոց» օդանավակայանի հին շենքը քանդելու թույլտվության համար: Ըստ կազմակերպության ներկայացրած փաստաթղթերի՝ շենքը պետք է քանդվի, քանի որ վնասված են կոնստրուկցիաները: Երեւանի քաղաքապետարանը մերժել էր կազմակերպության առաջարկությունը:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» կազմակերպությունը նշել էր նաեւ, որ 5-10 տարի անց ավելի են ընդլայնելու իրենց բիզնեսը, եւ հին մասնաշենքը կխոչընդոտի այդ հարցում:

Երեկ «**Ազգ**»-ին Հանրային խորհրդից տեղեկացրին, որ խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանը կազմակերպել է քննարկում, որի օրակարգում օդանավակայանի հին շենքի հարցն է եղել:

Քաղավիացիայի վարչությունը նամակ էր ուղղել Մանուկյանին՝ քննարկելու եւ գնահատական տալու հարցին: Քաղավիացիայի վարչության պետի առաջարկությամբ հարցը կքննարկվի նաեւ մասնագիտական լսարանում, այնուհետեւ կներկայացնի հանրային լայն քննարկմանը:

Օդանավակայանը հիմնադրվել է 1964-ին, նոր շենքը նախագծվել է 1974-ին եւ շահագործման հանձնվել 1982-ին:

Հ. Հ.

# Հովիկ Աբրահամյանը՝ սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով ստեղծելու մասին

Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանը** երեկ Արմավիրի մարզում լրագրողների հետ ունեցած ճեպազրույցի ժամանակ հայտարարել է, որ նախագահ Սերժ Սարգսյանի կարգադրությամբ ստեղծվելու է սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով, որը ղեկավարելու է Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը: Բայց նախ հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական ուժերի առաջարկները պետք է լսեն, քննարկեն՝ հասկանալու համար՝ արժե՞ անցնել պետության կառավարման խորհրդարանական մոդելին:

Մ. Խ.

# Նստացույց ու պիկետ «Փակ շուկայի» տարածքում

*1-ին էջից*

**«Մերոնք չեն սիրում սարքել: Մեր սեփականատերերը գերադասում են քանդել: Չեն հասկանում, որ ամեն քանդած շենքով քաղաքի դիմագիծն են աղավաղում: Թող օգտագործեն, բայց ինչո՞ւ անպայման քանդեն, մի՞թե չեն կարող առանց քանդելու շենքն օգտագործել»: Թե ով է ղեկավարում շուկայի վերականգնողական աշխատանքները՝ հայտնի չէ: Քալաշյանը չի բացառում, որ հենց Ալեքսանյանն էլ ղեկավարում է: Նա կարդացել է տեսել, թե ինչպես է Ալեքսանյանը տանիքին կանգնած հրահանգներ տալիս, ի՞նչ անել, ինչպե՞ս անել:**

**Ճարտարապետ Սարհատ Պետրոսյանն էլ հղում է անում օրենսդրությանը, որը թույլ է տալիս զրկել սեփականատիրոջը շուկայի սեփականության իրավունքից: Հայաստանը 2008-ին ստորագրել է Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության կոնվենցիան, որով պարտավորություն է ստանձնել պետական համակարգում ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնցով հնարավոր կլինի զրկել սեփականատիրոջը շահագործման իրավունքից, եթե վերջինս վնաս է հասցրել հուշարձանին:**

**«Հուշարձանների մասին օրենքում ասվում է, որ եթե հուշարձանը շահագործողը կանխամտածված կամ ոչ կանխամտածված կերպով վնաս է հասցրել կառույցին, ապա նա զրկվում է շահագործման իրավունքից: Մշակույթի նախարարությունն այս օրենքն հրացնողն է եւ հուզիչ ու լացակումած հայտարարություններով հանդես գալու փոխարեն պետք է ամեն կերպ հրացներ օրենքի պահանջը», ասում է Պետրոսյանը: Թե ինչ կանեն մշակույթի նախարարությունն ու իրավապահ մարմինները՝ ապագայի հարց է: Թեպետ կանխատեսելի է, որ եթե երկու տարի ոչինչ չեն ձեռնարկել, հիմա էլ լռություն ու անտարբերություն կպահպանեն:**

**Նոր ձեւավորված «Ազատագրենք հուշարձանն օլիգարխից» հասարակական շարժման նախաձեռնած բողոքի ակցիան կմեկնարկի այսօր՝ ժամը 12-ին շուկայի տարածքում:**

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Հուլիսին անշարժ գույքի գները դարձյալ անփոփոխ են

## *Գործարքների քանակը նկատելիորեն աճել է*

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի՝ շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի հուլիսին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 17266 գործարք, ինչը 2,2 տոկոսով ավելի է նախորդ ամսվա՝ հունիսի եւ 22,6 տոկոսով բարձր՝ 2012-ի հունիսի գործարքների համեմատ:

Օտարման գործարքների քանակը հուլիսին հունիսի համեմատ աճել է 15,6 տոկոսով, իսկ անցյալ տարվա հուլիսի համեմատ՝ 15,1 տոկոսով: 4567 օտարման գործարքներից առքուվաճառքներինը կազմել է 75,6 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42,8 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ առքուվաճառքի գործարքների 39,8 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի հունիսի համեմատ, հուլիսին բնակարանների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 21,7 տոկոսով, իսկ նախորդ տարվա հուլիսի համեմատ՝ 30,9 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա հուլիսին հունիսի համեմատ աննշան աճ են ունեցել: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | հուլիս 2012թ. | հուլիս 2013թ. | հունիս 2013թ. |
| Կենտրոն | 415050 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 342800 | 355500 | 355500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 270100 | 282300 | 282300 |
| Նոր Նորք | 232050 | 251000 | 251000 |
| Ավան | 243000 | 259100 | 259100 |
| Էրեբունի | 238300 | 249000 | 249000 |
| Շենգավիթ | 238500 | 255000 | 254250 |
| Դավթաշեն | 263100 | 274500 | 274200 |
| Աջափնյակ | 229800 | 248000 | 247200 |
| Մալաթիա-Սեբաստիա | 228400 | 241000 | 240000 |
| Նուբարաշեն | 140200 | 152200 | 152000 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 258300 | 272050 | 271900 |

Մարզերում, բացառությամբ Երեւանի, հուլիսին վաճառվել են 416 բնակարաններ, որոնց քանակը հունիսի համեմատ աճել է 22,7 տոկոսով, իսկ 2012-ի հուլիսի համեմատ՝ 14 տոկոսով: Գներն այստեղ հուլիսին հունիսի համեմատ եւս աննշան աճ են ունեցել:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները հունիսին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 155 հազար հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 154 հազար դրամ, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորում՝ 124 հազար դրամ, Արմավիրում եւ Գորիսում ՝ 121 հազար դրամ, Իջեւանում 118 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:



2013-ի հուլիսին Հայաստանում գրանցվել է անհատական տների առքուվաճառքի 444 գործարք, որից 129՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առքուվաճառքի գործարքների քանակը 2013-ի հունիսի համեմատ նվազել է 0,8 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 6,8 տոկոսով: 2012-ի հուլիսի համեմատ անհատական բնակելի տների առքուվաճառքի գործարքների քանակը Երեւանում աճել է 3,2 տոկոսով, իսկ մարզերում՝ 26 տոկոսով:

Միջինացված՝ 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) Երեւանում 2012-ի հուլիսին հունիսի համեմատ մնացել են անփոփոխ: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գների պատկերը հետեւյալն է եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները/դրամ/ | | |
|---|---|---|---|
| | հուլիս 2012թ. | հուլիս 2013թ. | հունիս 2013թ. |
| Կենտրոն | 463800 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 369600 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 280500 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 307100 | 319200 | 319200 |
| Ավան | 260400 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 228800 | 239500 | 239500 |
| Շենգավիթ | 245100 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 263800 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 239600 | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 228000 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 144500 | 150500 | 150500 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 275600 | 286600 | 286600 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների գները: Այստեղ միջին գները հուլիսին հունիսի դարձյալ անփոփոխ են: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է 1 քմ-ն 157 հազար դրամ, երրորդը՝ Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Ջերմուկը՝ 131 հազար դրամ, Գորիսը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 123 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի հուլիսին 2012-ի հուլիսի համեմատ, հողերի առքուվաճառքի գործարքների քանակն աճել է 8 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ նվազել 13,7 տոկոսով:

2013-ի հուլիսին հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 6,6 տոկոսով, իսկ 2012-ի հուլիսի համեմատ՝ աճել 10 տոկոսով:

Հուլիսին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 180 գործարքներ, որից 199՝ Երեւանում: Հունիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 11,5 տոկոսով, իսկ մարզերում՝ 8,2 տոկոսով: 2012-ի հուլիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում աճել է 47,5 տոկոսով, իսկ մարզերում՝ նվազել 26,4 տոկոսով:

Այսպիսով, անշարժ գույքի շուկայում արդեն մի քանի ամիս գները գրեթե անփփոխ են մնում: Այդ նույն ընթացքում գործարքների քանակը հետեւյալ կերպ է փոխվել՝ փետրվարին-մարտին՝ զգալի աճ, ապրիլին-մայիսին՝ նվազում եւ հունիս-հուլիսին գործարքների քանակը կրկին նկատելիորեն աճել է: Հավանական է թվում շուկայի աշխուժացման միտումը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

# Անհասկանալի իշխանություն եւ ընդդիմություն

*1-ին էջից*

Դիցուք Հայաստանի իշխանությունը. ամիսներով հարցեր են կուտակվում, իրադարձություններ են տեղի ունենում, տեղական ու միջազգային նշանակության կենսական խնդիրներ են հասունանում՝ բարձր իրավասուներից ոչ ոք չի նստում հեռուստացույցի առջեւ բացատրելու սեփական ժողովրդին՝ ի՞նչ է կատարվում, ի՞նչ մտադրություններ ունենք մենք, հայերս, ի՞նչ է մտմտում Հայաստանի իշխանությունը, ո՞ր հարցի վերաբերյալ ինչպիսի տեսակետ ունենք: Հայաստանի քաղաքացին դա հատկապես սպասում է Հայաստանի նախագահից: Նախագահը հո մենակ ՀՀԿ-ի նախագահը չէ, որ հինգշաբթի օրերը գնում ու իր կուսակցության հետ փակ ինչ-որ խնդիրներ է քննարկում, որոնց մասին տեղեկությունները էլ ընտրովի են մատուցվում, եւ ի վերջո չենք իմանում՝ ո՞ր հարցի մասին ի՞նչ տեսակետ է հնչել այդ փակ նիստերին: Կամ միայն հո նախարարությունների ու գերատեսչությունների նախագա՞հը չէ, որ այդ կառույցներում ինչ-որ էլ փակ հանդիպումներ է ունենում, իրեն հարկավոր ապսպրանքները տալիս, որոնց վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը սովորաբար միայն շատ քիչ բան է փոխանցում:

Ասենք, ողջ ամառ, մինչեւ օգոստոսի 30-ը ներառյալ (մինչեւ նախագահի նստավայրից տարածված տեղեկությունը), մարդիկ ենթադրություններ էին անում, թե սեպտեմբերի 3-ին Մոսկվայում ի՞նչ կարեւոր խնդիրներ են քննարկվելու Պուտին-Սարգսյան հանդիպմանը, ու ամենաֆանտաստիկ ենթադրությունները էին արվում, թե՝ հաստատ Ասոցիացման պայմանագրի նախաստորագրման հետ կապված խնդիրների շուրջն է հանդիպումը, թե՝ Պուտինը չի թողնելու այն ստորագրենք, թե՝ Մաքսային միությունն է դեմ տալիս, թե՝ ֆինանսական օժանդակության հարց է լուծվելու. ու ոչ ոք չկա բացատրի՝ ո՞րն է մեր դիրքորոշումը, որ պիտի Մոսկվա տանենք, այդ այցի հետ կապված ի՞նչ խնդիր է անհանգստացնում Հայաստանին: Առհասարակ՝ պարզ, մարդկային լեզվով երկրի քաղաքացիների հետ ինչու չի զրուցում նախագահը՝ բացատրելով, թե ի՞նչ է տալու մեզ Ասոցիացման պայմանագիրը, ի՞նչ ենք ստանում ռուսների հետ առաջիկա հանդիպումից: Որ մարդիկ իրենց մարդատեղ դրված համարեն ու երկրի ղեկավարի կողմից ուղիղ իրենց ուղղված խոսք լսեն, մտորելու, եզրակացության գալու համար էլ առաջին ձեռքից նյութ ստանան՝ չմիջնորդավորված, էս ու էն երկրի մայրաքաղաքում չասված, առանց բազմիմաստ ու անհասկանալի ենթատեքստերի: Ուղիղ եւ շիտակ սեփական երկրի ժողովրդին ասվի վերջապես՝ այս հարցի մասին այս դիրքորոշումն ունենք, այն հարցի մասին՝ այն: Շահարկումների դուռը փակելով եւ շագանակի սիրահարներին թույլ չտալով թպրտալ:

Սիրիան էսօր-էգուց ռմբակոծում են՝ մերոնք բան չեն ասում. ո՞րն է մեր դիրքորոշումը մեզանից ոչ շատ հեռու գտնվող երկրի հանդեպ հարվածների պարագայում, սիրիահայերի հանդեպ ինչ գործելակերպ ենք որդեգրելու, ինչից զգուշանանք, ինչից՝ ոչ: Մանավանդ ակնհայտ է, որ Սիրիային դաս տալով՝ հակասիրիական դաշինքը զգուշացնելու է մեր դաշնակից Իրանին՝ նրա միջուկային հավակնությունների համար, իսկ սա արդեն ողջ տարածաշրջանում ռեզոնանսի ու հետեւանքների խնդիր է, Թուրքիան էլ կողքներս: Պարզ է, որ այս մասին էլ խոսվելու է Պուտին-Սարգսյան հանդիպմանը, բայց մինչ այդ մտահոգությունները չբարձրաձայնվե՞ն ամենաբարձր մակարդակով եւ երկրի քաղաքացիների մտավախություններին ի տրիտուր:

Կամ գազի գինը բարձրանալիս հնարավոր չէ՞ր ժողովրդին ժամանակին տեղեկացնել, հիմնավորմամբ հանդերձ, որը գուցե ավելի ընդունելի լիներ, քան գազի գնի հետ կապված ողջ պարտիզանությունը:

Կամ ասենք՝ հիմա խոսք է գնում խորհրդարանական կառավարման համակարգի անցնելու եւ սահմանադրական փոփոխությունների մասին՝ սա պետական մակարդակի միջոցառում է: Եթե այսպիսի բան կա՝ ինչո՞ւ պետք է ժողովուրդն այդ մասին երկրի ղեկավարից չիմանա՝ հիմնավորմամբ հանդերձ, կամ եթե չկա, էլի նույն ձեւով: Թե չէ՝ արտահոսքերով տեղեկություն տալն ու մանիպուլյացիաները հոգնեցրել են բոլորին:

Նույն կերպ կուսակցությունները՝ ընդդիմադիր ու իշխանական, հավաքվում-փակ ակումբների նման խնդիրներ են քննարկում: Ոչ ոք չի հասկանում՝ ի՞նչ մտադրություններ ունեն նրանք, այս կամ այն հարցի հետ կապված ինչ են մտածում (խոսքը պաշտոնական տեսակետի մասին է, ոչ թե անհատների մակարդակով զրույցների), նրանց հաջորդ քայլն ինչ է, կամ ինչո՞ւ են նրանց որոշումները ոչ թե տրամաբանական հերթագայությամբ կայացվում, այլ՝ անսպասելի, ու միշտ անակնկալի են բերում հանրությանը: Ախր անակնկալի բերում են թշնամուն: Իսկ Հայաստանի քաղաքացիներին պետք չէ անակնալի բերել, նրանց հարկավոր է սեփական ղեկավարների եւ սեփական կուսակցությունների կանխատեսելի վարք եւ աշխատանք: Մանավանդ՝ բոլոր կարեւոր հարցերի վերաբերյալ մտերմիկ զրույց իրենց հետ, տեխնոլոգիապես զարգացած այս դարում այդ զրույցը ձեւերը գտնել միշտ էլ հնարավոր է: Իսկ գաղտնի, գորշ կարդինալական գործելակերպը անվստահություն է ծնում եւ սնում:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

## Զարգացման առաջարկ

# Արտաշատը դարձնել զբոսաշրջության կենտրոն

Արտաշատը հարուստ է պատմամշակութային կենտրոններով, որոնք կարելի է դարձնել զբոսաշրջության վայրեր: Լավագույններից են պատմական Դվին մայրաքաղաքի ավերակները, որոնք գտնվում են Երեւան քաղաքից հարավ 25 կմ հեռավորության վրա, Հնաբերդ գյուղի վարչական տարածքի մեջ:

Դվինը արաբերենից թարգմանած՝ նշանակում է բլուր, բարձրությունը հասնում է 30 մ, մակերեսը՝ 4000 քմ: Այն հիմնադրվել է 4-րդ դարի 333 թ.՝ Արշակունյաց Խոսրով Կոտակ թագավորի կողմից եւ կործանվել է 1236 թ.: Դվինի բլուրների վրա պեղումներից հայտնաբերվել է, որ 7000 տարի առաջ բնակելի տարածք է եղել, եկեղեցի, կաթողիկոսարան՝ 5-րդ դարի եւ պալատ՝ 7-րդ տարի: Դվինը թանգարան ունի՝ հարուստ անտիկ շրջանի ցուցանմուշներով՝ ոսկե եւ արծաթե զարդերով, երկաթե զենքերով, մետաղադրամներով, կան կավե եւ հախճապակե ամաններ: Այս տարի լրացավ հիմնադրման 1680-ամյակը:

Պատմական Արտաշատը հիմնադրվել է Ք.ա. 189 թ.-ին Արտաշես արքայի կողմից: 2011-ին նշվեց քաղաքի հիմնադրման 2200-ամյակը:

ԱԺ նախագահի Հովիկ Աբրահամյանի հովանավորությամբ կառուցվում է Սուրբ Հովհաննես եկեղեցին, որի բարձրությունը 35 մ է: Արտաշատի թատրոնը եւս հազարամյակների պատմություն ունի, Ք.ա. 53 թ. այնտեղ առաջին անգամ ներկայացվել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» պիեսը: Թատրոնի շենքի առջեւ, ձախ եւ աջ կողմերում տեղադրված են Տրդատ 3-րդ (285-330) եւ օլիմպիական չեմպիոն Վարազդատ (385-389) թագավորների հուշարձանները:

Քաղաքն ունի հանրապետական նշանակության ֆուտբոլի մարզադաշտ, որտեղ տարբեր մարզաձեւերից մրցումներ են կազմակերպվում: 2011-ին այդտեղ ծառահատման ժամանակ ծառի կտրված մակերեսի վրա խաչապատկեր է նկատվել: Ըստ բնակիչների մեջ տարածված պատկերացումների, մոտակայքում խաչ է թաղված եղել:

Լանջազատը (Զովաշեն) ճանաչվում է իր հէկով, Ազատի ջրամբարով, «Զովաշենի անուրջներ» հանգստյան գոտիով եւ ձկնաբուծարանով: Գյուղատնտեսական հողերի ոռոգման նպատակով՝ 1974 թ. կառավարության միջոցներով կառուցվեց Ազատի ջրամբարը, որը զբաղեցնում է 300 հա տարածություն, տարողությունը 70 միլիոն խմ է, խորությունը՝ 73 մ, ոռոգում է Արտաշատի եւ Արարատի շուրջ 7000 հա հողատարածքներ: Ջուրը թափվում է 5 մ բարձրությունից եւ ձորում ստեղծում է մի հրաշք պատկեր, անզուգական մի գեղեցկություն: Գեղեցիկ է նրա համայնապատկերը, նրա հյուսիսարեւմտյան մասում գտնվող հանքային աղբյուրն ունի բուժիչ հատկություններ: Աղբյուրից դուրս եկող ջրի հոսքից քարերի վրա գոյացել են կարմրասպիտակ գույնի ծալքավոր ձեւավորումներ՝ նման ծովի ալիքներին: Հեռվից նայելիս՝ նման է Ջերմուկի ջրվեժին: Այն հարուստ է ձկնատեսակներով՝ կողակ, իշխան, կարմրախայտ եւ այլն: Տարբեր տեղերից գալիս են ձուկ եւ խեցգետին որսալու:



Մրգավան գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցին

1993-ին հիմնադրվեց «Զովաշենի անուրջներ» հանգստյան գոտին, որը զբաղեցնում է 2 հա տարածություն, բաժանված է ռեստորանային եւ հանգստյան համալիրների: Դրանց միջով հոսում է Ազատ գետը, կան բնաշխարհի գեղեցիկ ներկայացուցիչներ՝ արջ, եղնիկ, փասիան, արծիվ, սագեր, բադեր, կռունկ, սիրամարգ, աղավնիներ: Տարածքներն աչքի են ընկնում դեկորատիվ եւ պտղատու ծառերի հարուստ տեսականիով:

Մրգավանը բնակատեղի է եղել մեզանից հազար տարի առաջ, գյուղի հարավում՝ Արտաշատ-Երեւան ավտոխճուղու ձախ կողմի բլրի վրա: Բնակատեղի Թեփե հարավային մասում, 19-20-րդ դարի գերեզմանոցում կան 12-13-րդ դարի 3 խաչքարեր:

Մրգավանն ունի Սուրբ Հակոբ եկեղեցին, որը կառուցել է համագյուղացի Անդրեաս Սարգսյանը 1901-1908 թվականներին, իսկ Մասիսի լանջի Ակոռի գյուղից բերված քարը դրվել է եկեղեցու հիմքում: 1936 թվականին խորհրդային կառավարությունը որոշում է քանդել եկեղեցին, սակայն մրգավանցիները հրաժարվում են քանդելուց, եւ եկեղեցին փրկվում է: Համագյուղացի Հովհաննես Ղազարյանի ներդրումների շնորհիվ պարսպապատվել է եկեղեցու շրջակայքը, կառուցվել է 100-տեղանոց մատաղատուն՝ խոհանոցով, եկեղեցուն նվիրել է երգեհոն: Իսկ Մխիթար քահանա Ալոյանի նախաձեռնությամբ եւ տիկին Իսփեքյանի ներդրմամբ՝ կառուցվել են Գարեգին Ա կաթողիկոսի հիշատակին նվիրված խաչքար-ցայտաղբյուրներ, որոնցից մեկը տեղադրված է եկեղեցու բակում, մյուսը՝ դպրոցի:



Շահումյան գյուղի թանգարանը դրսում

Ոստան համայնքի ղեկավար Հակոբ Խաչատրյանի աջակցությամբ՝ գյուղապետարանի սենյակներից մեկում մեր կողմից 2005-ին հիմնադրվեց պատմության թանգարան, որտեղ կան 160 տեսակի ցուցանմուշներ, Հայրենական եւ Արցախյան պատերազմների նահատակների, գյուղի կրթամշակութային կյանքի գյուղատնտեսության, սպորտի վերաբերյալ տվյալներ, արխիվային նյութեր, պատրաստված է գյուղի եւ երկաթուղային կայարանի մանրակերտը:

Շահումյան գյուղի բնակիչ Գրիգորը իր սեփական տան մի մասը դարձրել է թանգարան, որը հարուստ է բազմատեսակ հնաոճ եւ նոր ցուցանմուշներով, իսկ դրսում, ջրատարի մեջ, կառուցել է հին շինություններ: Այս գեղեցկությունը տեսնելու համար՝ շատերն են այստեղ գալիս:

Աշխարհում համանման ջուր կա միայն Գերմանիայում: Եթե այն նորից գործարկվի, Ջերմուկի նման ճանաչում ձեռք կբերի:

Կանաչուտ գյուղի տարածքը բնակեցված է եղել մեզանից 1500 տարի առաջ: Ըստ ավանդության, Կանաչուտում ապրել է օտարազգի Հասան աղան, որը սիրահարվել է մի հայ օրիորդի: Աղջիկը Հասանի հետ ամուսնանալու համար պայման է դնում կառուցել եկեղեցի, որտեղ կարողանա աղոթել: Եկեղեցին սկսում են կառուցել եւ երբ հասնում են երրորդ շարքին, աղջիկն առաջարկում է այն շարել կարմիր քարերով, պատճառաբանելով, թե Հասանն իր խոսքի տերը չի լինելու եւ ստիպելու է իրեն կրոնափոխ լինել, իսկ ինքը չի համաձայնելու, ուստի մահապատժի կենթարկվի: Այդպես էլ լինում է, Հասանը սրով երկու կես է անում աղջկան: Շատերը գյուղը «դոխ(կ)ուզ» են անվանում՝ ինը, աղջիկը այդպես էլ Հասանի 9-րդ կինը չդարձավ:



Հին Դվին քաղաքի ավերակները

Ըստ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի «կարմիր գոտի» բաժնի՝ Կըզըլկըլաղ եկեղեցին կառուցվել է 12-13-րդ դարերում եւ եղել է երկհարկանի: Սակայն եկեղեցուց այսօր միայն ավերակներ են մնացել, այն մինչեւ հիմա գործում է եւ ժողովրդի շրջանում հայտնի է որպես «կապույտ հազ» հիվանդության բուժման վայր:

Կանաչուտն ունեցել է Սուրբ Գեւորգ եկեղեցին՝ կառուցված 1838-ին: 2007-ին գյուղի բնակիչ, Արարատի նախկին մարզպետ Ալիկ Սարգսյանը վերակառուցեց եկեղեցին, որի համար Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակով նրան շնորհվեց «Ներսես Շնորհալի» պատվավոր շքանշանը:

Գետազատի տարածքում մարդկային բնակության հետքերը տեսանելի են եղել հնագույն ժամանակներից: Գյուղից արեւելք, 1,5 կմ հեռավորության վրա գտնվող բլրին կան հնագույն ամրոցի հետքեր՝ «Աղջկա բերդ» անվանմամբ: Բլրի արեւելյան եւ արեւմտյան լանջերում կա քարանձավների շարք՝ «Թագավորի տաշտ», «Թագավորի պալատ» անուններով: Հնագետները դրանք վերագրում են նոր քարե դարի ժամանակաշրջանին: «Աղջկա բերդ» կոչվածը եղել է անասնապահական ձմեռանոց, որտեղից հայտնաբերվել են թրծած կավից պատրաստված զանազան իրերի բեկորներ, ջրատար խողովակների կտորներ: Հնագետները համոզված են, որ Գեղամա լեռների սառնորակ աղբյուրների ջրերը նման խողովակներով տարվել են Դվին մայրաքաղաք եւ Միջնաբերդ:

Ազատավանի ջրաբուժարանը գտնվում է Բուրաստանի վարչական տարածքում (3000 քմ): 1973 թ. նավթ որոնելիս 2638 մ խորությունից դուրս է եկել բարձր խտությամբ հանքային ջուրը (37,6 գրամ, ջերմությունը՝ 42):

Ջրաբուժարանի շենքը կառուցվել է Արտաշատի շրջխորհրդի գործկոմի ֆինանսական միջոցներով: Ներկայումս անմխիթար վիճակում է, գործել է 15 տարի, մինչեւ 1988 թ.: Ջրաբուժարանը բուժում է նյարդային հիվանդություններ՝ ռադիկուլիտ, իշիազ, նեւրոզ, նեւրիտ, խպիպ/զոբ, հոդացավեր, նյութափոխանակության խանգարումներ, մաշկային որոշ հիվանդություններ:

Իսկ երբ Արտաշատը զբոսաշրջության կենտրոն դառնա, բնականաբար, նոր աշխատատեղեր կբացվեն, արտագաղթը կնվազի:

Արտաշատը զբոսաշրջության կենտրոն դառնալու համար անհրաժեշտ է վերագործարկել խորհրդային իշխանության ժամանակ կառուցված ասֆալտապատ ճանապարհը, որը քանդվել է, այն կապ էր ստեղծում Երեւան-Գառնի գնացող ճանապարհի հետ: Այդ ճանապարհով Արարատի մարզը կապվում է Կոտայքի մարզին:

Այդ ճանապարհը, որը սկսվում է Զովաշենից, ունի մեծ նշանակություն՝

ա) ռազմավարական,

բ) ճանապարհը կրճատվում է 30-35 կմ (Արտաշատ-Երեւան-Գառնի),

գ) Երեւանը տրանսպորտային միջոցներից կբեռնաթափվի,

դ) զբոսաշրջիկները Երեւանից Գառնի գնացող ճանապարհով Արտաշատ գալու դեպքում կտեսնեն Ազատ գետը, Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, Ազատի ջրամբարը, «Զովաշենի անուրջներ» հանգստյան գոտին եւ այլն: Արարատի մարզպետարանը կարող է հող հատկացնել Մասիսի-Նոյի տապանի հայացքի ներքո զբոսաշրջության կենտրոն կառուցելու համար:

**ԽԱՉԱՏՈՒՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**Ոստան, Արարատի մարզ**

ԱԶԳ **Միջազգային**

# Չակ Հեյգել. «ԱՄՆ-ը կշարունակի հակասիրիական կոալիցիա ստեղծելու փորձերը»




ԱՄՆ-ը կշարունակի Սիրիայի դեմ համատեղ գործողությունների ձեռնարկման նպատակով միջազգային կոալիցիա ստեղծելու փորձերը, օգոստոսի 30-ին հայտարարել է Պենտագոնի ղեկավար Չակ Հեյգելը: Նախօրեին ամերիկացիների գլխավոր դաշնակից Մեծ Բրիտանիայի խորհրդարանը հրաժարվել էր պաշտպանել Սիրիայում այսպես կոչված «մարդասիրական ներխուժում» կատարելու ծրագիրը:

Ռոյթեր գործակալությունը մեջբերում է Հեյգելի այն խոսքերը, որ «նախագահ Բարաք Օբամայի եւ կառավարության նպատակն է հակասիրիական գործողությունն իրականացնել որպես միջազգային համագործակցություն»: Ըստ Պենտագոնի ղեկավարի՝ Վաշինգտոնը կշարունակի խորհրդակցությունը Լոնդոնի հետ:

Ավելի վաղ ամերիկացի պաշտոնական անձինք չէին բացառել, որ Միացյալ Նահանգները թերեւս ստիպված լինի միակողմանի գործողությունների դիմել Սիրիայի հարցում: Մի շարք լրատվամիջոցներ փորձում են գուշակել, թե ամերիկացիները երբ կհարվածեն Սիրիային: «Նյու Յորք թայմս» թերթը վկայակոչում է Օբամայի վարչակազմի որոշ պաշտոնյաների, որոնք պնդում են, որ նախագահը պատրաստ է սահմանափակ հարված հասցնել Սիրիային, եւ որ բրիտանացիների որոշումը չի կանգնեցնի նրան: Ոմանք ենթադրում են, թե հարվածը տեղի կունենա ՄԱԿ-ի տեսուչների մեկնումից անմիջապես հետո: «Ազգը» երեկ գրեց, որ օգոստոսի 30-ը Դամասկոսի մոտակայքում՝ ենթադրյալ քիմիական գրոհի վայրում նրանց աշխատանքի վերջին օրն է, իսկ 31-ին տեսուչները կմեկնեն Սիրիայից եւ կներկայացնեն իրենց զեկույցը:

Նախապես փորձագետները կարծում էին, թե հարվածը կհասցվի լույս ուրբաթ գիշերը, սակայն, ինչպես գրում է մոսկովյան «Կոմերսանտ» թերթը, հինգշաբթի օրը Բաշար Ասադի հակառակորդների տոնը փոքր-ինչ փոխվեց: Նույնիսկ Ֆրանսիան, մոռանալով Դամասկոսին պատժելու իր թունդ կոչերը, պատրաստակամություն հայտնեց սպասելու ՄԱԿ-ի հետեւություններին:

Բացի դրանից, պարզ դարձավ, որ ի տարբերություն տասնամյա վաղեմության հակաիրաքյան հարձակման, որն անցել էր ԱՄՆ-ի անվերապահ ղեկավարությամբ եւ Եվրոպայի «հիմնաբացարկմամբ», Բարաք Օբաման չի ձգտում առաջնորդի դեր ստանձնել հակասիրիական պատերազմում, կարծում է «Կոմերսանտը»:

Լիակատար պարզություն չի լինի նաեւ Սիրիայում ՄԱԿ-ի տեսուչների աշխատանքի ավարտից հետո, նշում է թերթը: Պատճառն այն է, որ տեսուչների առաջադրանքների մեջ չի մտնում քիմիական գրոհի համար պատասխանատու կողմի բացահայտումը. նրանք պարտավոր են միայն պարզել՝ եղե՞լ է արդյոք քիմիական գրոհ, եւ եթե եղել է, ի՞նչ նյութ է օգտագործվել: Իսկ մեղավորին պետք է որոշի ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը: Սակայն, դատելով դրա անդամների տրամադրվածությունից, խորհուրդը դժվար թե կարողանա հանգել միասնական կարծիքի:

Սիրիայի դեմ Արեւմուտքի ռազմական գործողությունը փաստորեն դառնում է անխուսափելի: Եթե այն սկսվի, ապա ակնհայտորեն կանտեսվի Ռուսաստանի եւ Չինաստանի կարծիքը, որոնք դեմ են քվեարկում ՄԱԿ-ի ԱԽ-ում, գրում է «Վեդոմոստի» թերթը ուրբաթ օրվա խմբագրականում: Քաղաքագետները միաձայն ասում են, որ այժմ ռազմական գործողությունը որեւէ մեկին ձեռնտու չէ: Սակայն Լիբիայում, Իրաքում, Հարավսլավիայում քանիցս իրագործված հակամարտության տրամաբանությունը աստիճանաբար հանգեցնում է ուժեղի միջամտությանը:

ՌԴ Քաղաքական տեխնոլոգիաների կենտրոնի փորձագետ Բորիս Մակարենկոյի կարծիքով, եթե ամերիկացիներն ապացուցեն, որ Ասադն է քիմիական զենք օգտագործել, ապա Ռուսաստանը ստիպված կլինի ընտրություն կատարել, թե որտեղ է ինքը եւ ում հետ:

Պ. Ք.

ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

# ԱՄՆ հատուկ ծառայությունների «սեւ բյուջեի» մասին

*1-ին էջից*

**Անցյալ տարի ԿՀՎ-ի, ԱԱԳ-ի եւ մյուս 14 գաղտնի ծառայությունների «սեւ», այսինքն՝ հանրության համար անտեսանելի բյուջեն կազմել է 55 մլրդ դոլար: Ընթացիկ ֆինանսական տարում կառավարությունը հետախուզական նպատակների համար Կոնգրեսից խնդրել է 52,6 միլիարդ:**

**Առավել շատ ֆինանսավորվում է ԿՀՎ-ն՝ 14,7 մլրդ դոլար: ԱԱԳ-ի եւ Օդատիեզերական հետախուզության ազգային վարչության բյուջեները կազմում են համապատասխանաբար 10,8 եւ 10,3 մլրդ դոլար: Սրան նաեւ 23 միլիարդ է գումարվում Պենտագոնի ռազմական հետախուզության համար:**



**Հատուկ ծառայությունների նպատակային ծրագրերի մեջ առավել շատ ֆինանսավորվում է նախազգուշացումը զանազան կրիտիկական երեւույթների վերաբերյալ. տնտեսական կայունությանը սպառնացող վտանգ, սոցիալական լարվածության աճ կամ տարածաշրջանների ծայրահեղ իրավիճակներ: Նման կանխարգելիչ գործունեությունը 2013 թ. պետական գանձարանի վրա կնստի 20,1 մլրդ դոլար: Հակահետախուզությանը եւ օտարերկրյա հատուկ ծառայությունների դեմ մղվող պայքարին հատկացված է ընդամենը 3,8 միլիարդ:**

**Բացի դրանից, ինչպես գրում է թերթը, ԱԱԳ բյուջեում կա մի քանի հարյուր միլիոն դոլար, որն ամեն տարի ամերիկյան ընկերություններին է վճարվում գաղտնաբար նրանց հաղորդակցական ցանցեր թափանցելու համար:**

**Փաստաթղթի համաձայն, ամերիկյան հատուկ ծառայությունների գլխավոր թիրախներից մեկը մնում է Ռուսաստանը՝ Չինաստանի, Իրանի, Կուբայի եւ Իսրայելի հետ մեկտեղ: «Փաստաթղթում Իսրայելի ներկայությունը բացատրվում է նրանով, որ Վաշինգտոնը հետաքրքրվում է ոչ միայն թշնամիների, այլեւ բարեկամների գաղտնիքներով», շարունակում է թերթը:**

**Ամերիկյան հատուկ ծառայությունները ամենամեծ դժվարություններին բախվում են ԿԺԴՀ-ի վերաբերյալ տեղեկություններ հայթայթելիս: Այդ երկրի միջուկային ու հրթիռային ծրագիրը փորձում են ուսումնասիրել տեխնիկական բոլոր միջոցներով, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:**

**Փաստաթղթից երեւում է, որ 2001 թ. սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ հետախուզության բյուջեն կրկնապատկվել է՝ հասնելով ավելի քան 500 մլրդ դոլարի: Ներկայումս ԱՄՆ հետախուզության ծախսերն ավելի շատ են, քան «սառը պատերազմի» տարիներին: ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Կլեպերն ասում է. «Արդի աշխարհն ավելի անկայուն է, քան երբեւէ վերջին կես դարում: Ըստ որում, ամերիկյան հետախուզական ընկերակցության ծախսերը չեն գերազանցում ԱՄՆ ՀՆԱ 1 տոկոսը»:**

**Սպիտակ տան պաշտոնական ներկայացուցիչ Ջոշ Էռնեստը օգոստոսի 30-ին կազմակերպված մամլո ճեպազրույցում հրաժարվել է մեկնաբանել հատուկ ծառայությունների բյուջեին վերաբերող հրապարակումը եւ միաժամանակ մտահոգություն է արտահայտել «գաղտնի տեղեկությունների վնասաբեր արտահոսքերի» կապակցությամբ:**

Պ. Ք.

# Ադրբեջանում նախագահի քուրդ թեկնածու կգրանցվի՞

Բաքվում իշխող վարչախմբի էթնիկ ծագումնաբանությունը մինչեւ վերջ պարզ չէ: Որոշ աղբյուրներ նշում են, որ Հեյդար Ալիեւը էթնիկ քուրդ է, ծնվել է Սիսիանում: «Համազգային առաջնորդի» պաշտոնական կենսագրականում, մինչդեռ, ասվում է, որ նա ծնվել է Նախիջեւան քաղաքում, ազգությամբ «ադրբեջանցի է»:

Այդուհանդերձ, իշխող ընտանիքի «քրդական ծագման» մասին խոսակցությունները չեն դադարում: Ինչպես նաեւ ակնարկվում է, որ ժամանակին իբրեւ ՊԱԿ-ի սպա Հեյդար Ալիեւը «համագործակցել է PKK-ի հետ»: Վերջին շրջանի մի շարք հրապարակումներում խոսվում էր այն մասին, որ թուրք-ադրբեջանական հարաբերություններում «քրդական թեման փորձաքար է»: Պաշտոնական Անկարան բազմիցս աներկմիտ պահանջել է, որ Ադրբեջանը PKK-ն հայտարարի «ահաբեկչական կազմակերպություն», սակայն Բաքվում ինչ-ինչ պատճառաբանությամբ այդպես էլ նման որոշում չի կայացվել:

Նախագահական ընտրությունների մոտենալուն զուգահեռ Ադրբեջանում քրդական թեմայի տաբուն կարծես որոշակիորեն խախտվել է: Նախ հայտարարվեց, որ քրդերն ստեղծել են մշակութային եւ լեզվական ինքնության հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություն, որը նպատակադրվել է «հակազդել քրդերի լիակատար ուծացմանը»:

Իսկ երեկ մամուլի համար հայտարարություն է տարածել Ադրբեջանի քրդական միակ թերթի՝ «Դիպլոմաս»-ի գլխավոր խմբագիր Թահիր Սուլեյմանը: Ըստ այդմ, նա մտադիր է առաջադրվել նախագահի թեկնածու: «Թուրան» գործակալության փոխանցմամբ, քուրդ խմբագիրն իր որոշումը բացատրել է այսպես. «Ադրբեջանում շատ գրագետ քրդեր կան, բայց որոշվել է առաջադրել իմ թեկնածությունը: Ընտրություններին մեր մասնակցությամբ մտադիր ենք ցույց տալ քրդերի համախմբվածությունը եւ հանդես գալ ի պաշտպանություն ադրբեջանական պետականության»:

Վերջին ձեւակերպումն, ըստ երեւույթին, արված է ապահովության համար: Քուրդ գործիչը կանխում է իրեն «անջատողականության» մեջ մեղադրելու փորձերը, բայց եւ միաժամանակ ընդգծում, որ ընտրապայքարին մասնակցելով քրդերը ձգտում են ցույց տալ իրենց համախմբվածությունը:

Այստեղ կածես հակասություն կա, որովհետեւ «ի պաշտպանություն ադրբեջանական պետականության» քրդերը կարող էին հանդես գալ նաեւ առանց նախագահի սեփական թեկնածու առաջադրելու հարցով քննարկումների:

Թվում է, նախագահի քուրդ թեկնածուի գաղափարը միայն իշխանությունների PR-ն է: Այդ քայլով Իլհամ Ալիեւը երեւի թե ձգտում է Ադրբեջանի նախագահական ընտրությունների վրա սեւեռել եվրոպական դիտորդների ուշադրությունը, որոնք մոտակա մի քանի օրերին արդեն երկարաժամկետ դիտորդական առաքելությամբ կլինեն Բաքվում:

Կարելի է վստահաբար ասել, որ եվրոպական դիտորդներն անպայման որպես «ժողովրդավարական առաջընթաց» կարձանագրեն Ադրբեջանում էթնիկ փոքրամասնության ներկայացուցչի համար «հավասար պայմաններ ստեղծելու փաստը»: Փաստացի ընդդիմության հանդեպ իշխող վարչախմբի գործադրած բռնությունների համապատկերին նախագահի քուրդ թեկնածուի «քարոզարշավը» կարելի է ներկայացնել որպես Ադրբեջանում «էթնիկ հանդուրժողականության ցայտուն օրինակ»:

Այս հանգամանքն ուշադրության է արժանի հատկապես այն իրողության նկատառմամբ, որ Ադրբեջանի էթնիկ փոքրամասնություններից ռուսական համայնքն արդեն իսկ հայտարարել է, որ «պաշտպանում է Իլհամ Ալիեւի թեկնածությունը», մինչդեռ լեզգիները եւ թալիշները, ինչպես մեր նախորդ հրապարակումներում էինք նշել, կասկածվում են «անջատողականության» մեջ:

Քուրդ գործիչն իրոք նախագահի թեկնածու կառաջադրվի՞, կկարողանա՞ հավաքել 40 000 ընտրողի ստորագրություն, դրանից հետո ԿԸՀ-ն նրան կգրանցի՞, թույլ կտա՞ քարոզարշավ սկսել եւ ի՞նչ ծրագրով հանդես կգա նա՝ պարզ կդառնա առաջիկա մի քանի օրերին: Այսօր կարող ենք միայն ասել, որ անկախությունից ի վեր Ադրբեջանում նախագահի այլազգի թեկնածու չի առաջադրվել: Թահիր Սուլեյմանն առաջին փորձն է անում, կամ իշխանություններն են նրան դրդել այդ քայլին: Իսկ եթե օրինակը վարակի մյուս էթնիկ փոքրամասնություններին...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Կոմիքս


ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՇՈՒՆ
ToTo
ԱՐԱ ԷՍ Ո՞Չ Ա....
ՓԱԿ ՇՈՒԿԱ Ո՞ՆՑ ԳՆԱՄ
ԷՍԻ ՓԱԿ ՇՈՒԿԱՆ ՉԻ, ՀԱՂԹԱԿԱՄԱՐ Ա...
ՄԻ ՆԵՂԱՑԻ.... ԱՐԻ ԻՐԱՐ ՀԵՏ ՆԿԱՐՎԵՆՔ...

ԱԶԳ **Մարզական**

# ՀՀ հավաքականը սկսում է ընտրական մրցախաղերի նախապատրաստությունը

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը սեպտեմբերի 2-ից Ավանի ֆուտբոլի ակադեմիայում կսկսի նախապատրաստվել առաջիկա ընտրական 2 մրցախաղերին: Սեպտեմբերի 6-ին մեր ընտրանին Պրահայի «Էդեն Արենա» մարզադաշտում կմրցի Չեխիայի հավաքականի հետ: Հայաստանի հավաքականը Չեխիա կմեկնի խաղի նախօրեին, իսկ հանդիպումից անմիջապես հետո կվերադառնա Երեւան ու կսկսի նախապատրաստությունը սեպտեմբերի 10-ին «Հրազդան» մարզադաշտում դանիացիների հետ կայանալիք ընտրական մրցախաղին:



Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը հրապարակել է սեպտեմբերյան հանդիպումներին նախապատրաստվող հավաքին հրավիրված ֆուտբոլիստների ընդլայնված ցանկը:

Դարպասապահներ՝ Ռոման Բերեզովսկի («Դինամո» Մ., Ռուսաստան), Գեւորգ Կասպարով («Զոբ Ահան», Իրան), Արսեն Բեգլարյան («Գանձասար»), Գոռ Մանուկյան («Փյունիկ»), պաշտպաններ՝ Ռոբերտ Արզումանյան («Ակտոբե», Ղազախստան), Կամո Հովհաննիսյան («Փյունիկ»), Լեւոն Հայրապետյան («Վիձեւ», Լեհաստան), Հրայր Մկոյան («Գանձասար»), Արթուր Ավագյան («Գանձասար»), Վարազդատ Հարոյան («Փյունիկ»), Տարոն Ոսկանյան («Փյունիկ»), Անդրանիկ Ոսկանյան («Միկա»), կիսապաշտպաններ՝ Հենրիխ Մխիթարյան («Բորուսիա», Դ., Գերմանիա), Արթուր Եդիգարյան («Կայրաթ», Ղազախստան), Դավիթ Մանոյան («Փյունիկ»), Կառլեն Մկրտչյան («Անժի», Ռուսաստան), Գեւորգ Ղազարյան («Շախտյոր», Ղազախստան), Մարկոս Պիզելի («Կրասնոդար», Ռուսաստան), Արաս Օզբիլիս («Սպարտակ», Մ., Ռուսաստան), Դավիթ Հակոբյան («Շիրակ»), Կարեն Մուրադյան («Շիրակ»), Արտակ Դաշյան («Գանձասար»), Վարդգես Սաթումյան («Միկա»), հարձակվողներ՝ Յուրա Մովսիսյան («Սպարտակ», Մ., Ռուսաստան), Արթուր Սարկիսով («Ուրալ», Ռուսաստան), Սարգիս Ադամյան («Հանզա», Գերմանիա):

# Օզբիլիսի եւ Մովսիսյանի գոլերն էլ չօգնեցին «Սպարտակին»

Մոսկվայի «Սպարտակը» սեփական հարկի տակ 2-4 հաշվով սենսացիոն պարտություն կրեց շվեյցարական «Սանկտ Գալենից» ու չկարողացավ ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի ուղեգիր նվաճել:



Շվեյցարիայում Յուրա Մովսիսյանի խփած գոլի շնորհիվ խաղն ավարտելով ոչ-ոքի (1-1), «Սպարտակը» հիանալի հնարավորություն էր ստացել Մոսկվայում լուծելու հաջորդ փուլի ուղեգրի հարցը: Մոսկովյան հանդիպումն էլ շատ հաջող սկսվեց սպարտակցիների համար, որոնք արդեն 1-ին րոպեին Արաս Օզբիլիսի դիպուկ հարվածի շնորհիվ բացեցին հաշիվը: Թվում էր, թե «Սպարտակը» հեշտությամբ կհաղթի մրցակցին, սակայն հետագայում շվեյցարացիները խառնեցին բոլոր խաղաքարտերը: Մինչեւ ընդմիջման գնալը հյուրերը 3 անգամ գրավեցին «Սպարտակի» դարպասը: Ընդմիջումից հետո խաղադաշտ մտած Յուրա Մովսիսյանը խաղավարտից 7 րոպե առաջ կրճատեց հաշվի տարբերությունը՝ 2-3, սակայն հյուրերը 4-րդ գնդակը խփեցին: Այսպես Օզբիլիսի եւ Մովսիսյանի խփած գոլերը չօգնեցին «Սպարտակին»:

Իսկ ահա ռուսական մյուս 2 ակումբները հաջող խաղացին եւ խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեցին: «Կուբանը», որ առաջին խաղում սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթել էր հոլանդական «Ֆեյենորդին», հյուրընկալվելիս էլ առավելության հասավ (2-1): Թեեւ արդեն 7-րդ րոպեին Պելլեն առաջ մղեց դաշտի տերերին, սակայն հետագայում «Կուբանը» 2 գոլ խփեց ու հաղթեց:

Կազանի «Ռուբինն» էլ կրկին հաղթեց նորվեգական «Մոլդեին»՝ այս անգամ 3-0 հաշվով:

Հաջող ելույթներ ունեցան Ուկրաինայի ներկայացուցիչները, որոնք խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեցին: Կիեւի «Դինամոն» պատասխան խաղում, սեփական հարկի տակ հաղթեց ղազախական «Ակտոբեին» (5-1): «Դնեպրն» էլ 2-րդ հաղթանակը տոնեց Էստոնիայի «Նիմե Կալյուսի» նկատմամբ (2-0): «Չեռնոմորեցին» ուղեգիրն ավելի դժվարին պայքարում բաժին հասավ: Թիմը հյուրընկալվելիս զիջեց ալբանական «Սկենդերբեուին», որին առաջին խաղում նույնպիսի հաշվով հաղթել էր: «Չեռնոմորեցը» հաղթեց հետխաղյա 11 մ հարվածներով:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեց նաեւ Տիրասպոլի «Շերիֆը», որը 2 խաղերի ընդհանուր արդյունքով առավելության հասավ սերբական «Վոյվոդինայի» նկատմամբ (1-1, 2-1):

Պայքարից դուրս մնացին վրացական 2 թիմերը: Թբիլիսիի «Դինամոն», որ սեփական հարկի տակ 0-5 հաշվով ջախջախիչ պարտություն էր կրել «Տոտենհեմից», պատասխան խաղում էլ 3 անպատասխան գնդակ ընդունեց իր դարպասը: Գորիի «Դիլան» 2-րդ պարտությունը կրեց «Ռապիդի» հետ մրցավեճում (0-3): Ադրբեջանի միակ ներկայացուցիչ «Ղարաբաղն» էլ չկարողացավ հաղթահարել գերմանական «Այնտրախտի» դիմադրությունը (0-2, 1-2):

ՇԱԽՄԱՏ

# Քոթանջյանը պահպանեց առաջատարի դիրքը

Մեկօրյա հանգստից հետո շախմատի Հայաստանի առաջին խմբի առաջնության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջն՝ անցկացնելով 8-րդ տուրի հանդիպումները:

Տուրի կենտրոնական հանդիպումը Տիգրան Քոթանջյանի եւ Հովհաննես Գաբուզյանի մրցավեճն էր: Քոթանջյանը հաջողության հասավ եւ 6,5 միավորով պահպանեց առաջատարի դիրքը: Նրան կրնկակոխ հետապնդող Կարեն Գրիգորյանի համար էլ տուրը հաղթական էր: Կարենի մրցակիցը Վահե Բաղդասարյանն էր: Գրիգորյանն այդ հաղթանակից հետո վաստակեց 6 միավոր:

5-ական միավորով հաջորդ տեղերում են Հովհաննես Գաբուզյանը, Լեւոն Բաբուջյանն ու Հովիկ Հայրապետյանը: Բաբուջյանը հաղթեց Արթուր Չիբուխչյանին, Հայրապետյանը պարտության մատնեց Դավիթ Քալաշյանին: 3,5 միավոր ունի Մանուել Պետրոսյանը, որը հաջողության հասավ Արտավազդ Հայրապետյանի հետ մրցավեճում: Միակ ոչ-ոքին գրանցվեց Տիգրան Հարությունյանի եւ Հայկ Վարդանյանի պարտիայում:

# Կառլեն Մկրտչյանը տեղափոխվեց «Անժի»

Ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականի եւ Դոնեցկի «Մետալուրգի» կիսապաշտպան Կառլեն Մկրտչյանը կարիերան կշարունակի Մախաչկալայի «Անժիում», որտեղ հանդես կգա վարձավճարով: Այս տեղափոխությունը մի փոքր անսպասելի էր: Ներկայումս «Անժին» վաճառում է իր «աստղերին», որոնց գնման համար մեծ գումարներ է ծախսել:

24-ամյա Կառլեն Մկրտչյանը ֆուտբոլային կարիերան սկսել է «Փյունիկում», որտեղից էլ 2011-ին տեղափոխվել է Դոնեցկի «Մետալուրգ»: 2010-ին նա ճանաչվել է Հայաստանի լավագույն ֆուտբոլիստ, իսկ անցած մրցաշրջանում նա արժանացել է «Մետալուրգի» լավագույն լեգեոնականի տիտղոսին:

# Բոտի Դեմելը կխաղա «Շիրակում»

Հայաստանի չեմպիոն Գյումրիի «Շիրակը» կես տարվա պայմանագիր է կնքել կոտդիվուարցի հարձակվող Բոտի Դեմելի հետ, որն արդեն միացել է շիրակցիներին: Սպասվում է, որ նա «Շիրակում» նորամուտը կնշի սեպտեմբերի 14-ին «Արարատի» հետ կայանալիք առաջնության խաղում: Նախորդ մրցաշրջանում Բոտի Դեմելը հանդես է եկել վրացական «Զեստաֆոնի» կազմում:

Բոտի Դեմելին լավ են ճանաչում հայ ֆուտբոլասերները, քանի որ նա ժամանակին հանդես է եկել «Միկայում»՝ աչքի ընկնելով արդյունավետ խաղով: Նա «Միկայում» 26 գոլի հեղինակ է դարձել:

2011-ի փետրվարին Դեմելը քառամյա պայմանագիր կնքեց Նորվեգիայի բազմակի չեմպիոն «Ռոսենբորգի» հետ, սակայն ծանր վնասվածք ստացավ եւ 8 ամիս խաղադաշտ դուրս չեկավ: Հաջորդ տարի Դեմելը խզեց պայմանագիրը «Ռոսենբորգի» հետ ու վերադարձավ «Միկա», որի կազմում անցկացրած 8 հանդիպումներում 3 գոլ խփեց: Սակայն վնասվածքից լրիվ չապաքինվելով, անցած տարվա ամռանը կոտդիվուարցի ֆուտբոլիստը կրկին հեռացավ «Միկայից»:

# Մելիքսեթ Խաչիյանը գրավեց 3-րդ տեղը

Armchess.am-ի տեղեկացմամբ, գրոսմայստեր Մելիքսեթ Խաչիյանը Լոս Անջելեսում շրջանաձեւ մրցակարգով անցկացված շախմատի 28-րդ Մետրոպոլիտեն մրցաշարում 9 հնարավորից վաստակած 5,5 միավորով զբաղեցրել է 3-րդ տեղը: Նա միայն կես միավոր է զիջել իրանցի Էլշան Մորադիաբադիին:

Միջազգային վարպետ Անդրանիկ Մատիկոզյանը 9 հնարավորից վաստակել է 3,5 միավոր:

# Հերթական պարտությունը

Ֆուտզալի Հայաստանի չեմպիոն «Շահումյանը» Բուլղարիայում ընթացող Եվրոպայի ակումբային գավաթի խաղարկության որակավորման փուլի 2-րդ խաղում 1-13 հաշվով զիջեց մակեդոնական «Ժելեզարեցին»: Հիշեցնենք, որ առաջին խաղում էլ հայ ֆուտբոլիստները 0-6 հաշվով պարտվել էին բուլղարական «Վառնային»:

# Ուսեյն Բոլտը մտադիր է նոր նվաճման հասնել




Օլիմպիական խաղերի վեցակի, աշխարհի ութակի չեմպիոն Ուսեյն Բոլտը 2016-ին Ռիո դե Ժանեյրոյում կայանալիք ամառային օլիմպիական խաղերում մտադիր է պաշտպանել իր տիտղոսները: Նրա երազանքն է թեթեւ աթլետիկայի պատմության մեջ դառնալ առաջին մարզիկը, որը 3 օլիմպիադաներում անընդմեջ չեմպիոն կհռչակվի 100 եւ 200 մետր վազքում եւ 4x100 մետր փոխանցումավազքում: Այս մասին անվանի թեթեւաատլետը հայտարարել է Ցյուրիխում կայացած մամուլի ասուլիսում:

Թեթեւ աթլետիկայում նվաճած օլիմպիական մեդալների քանակով յուրօրինակ ռեկորդակիրն ամերիկացի լեգենդար մարզիկ Կարլ Լյուիսն է: Նա արագավազքում եւ հեռացատկում ընդհանուր առմամբ նվաճել է 9 ոսկե ու 1 արծաթե մեդալ:

Ուսեյն Բոլտը հիանալի հանդես եկավ վերջերս Մոսկվայում ավարտված թեթեւ աթլետիկայի աշխարհի առաջնությունում՝ նվաճելով 3 ոսկե մեդալ 100 եւ 200 մետր վազքում ու 4x100 մ փոխանցումավազքում: Նա գերազանցեց Կարլ Լյուիսի ցուցանիշը՝ դառնալով աշխարհի 8-ակի չեմպիոն:

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ **Օրվա հետքերով**

# Սիրիայի կառավարությունը չի գործածել քիմիական զենք եւ չի գործածի

***Երեւանում Սիրիայի Արաբական Հանրապետության դեսպանությունը երեկ Հայաստանի զանգվածային լրատվամիջոցներին հասցեագրեց իր շրջաբերականը՝ ներկայացնելով Սիրիայի դիրքորոշումն Արեւմուտքի եւ տարածաշրջանում նրա գործիքների պնդումների եւ ենթադրությունների վերաբերյալ, որոնք կապված են Սիրիայում քիմիական զենքի օգտագործման հետ: Հրապարակում ենք շրջաբերականի գլխավոր հատվածները:***

Սիրիայի ճգնաժամի սկզբից ի վեր գրեթե ամբողջ երկուսուկես տարիների ընթացքում ԱՄՆ-ը, նրա դաշնակից արեւմտյան եւ տարածաշրջանային երկրները, հատկապես Սաուդյան Արաբիան, Թուրքիան է Քաթարը, ինչպես նաեւ ԱՄՆ-ի գործիքները ՝ հանձինս զինված ահաբեկչական խմբերի եւ «Ալ Ղաիդայի» կործանել են Սիրիան եւ նրա ենթակառուցվածքները, սպանել նրա բնակչությանը: Ահաբեկչական խմբերը ջարդեր են իրագործել Սիրիայի զինվորների եւ խաղաղ քաղաքացիների դեմ, իսկ այդ երկրներն ահաբեկչական խմբերին տրամադրել են քաղաքական, նյութական, ռազմական եւ թիկունքային տարատեսակ աջակցություն եւ անտեսել նրանց հանցագործությունները, միեւնույն ժամանակ Սիրիայի եւ նրա ժողովրդի հանդեպ կատարվածի պատասխանատվությունը դնելով Սիրիայի կառավարության վրա:

Տեսնելով մեր ժողովրդի եւ բանակի դիմադրությունը, Սիրիայի ղեկավարության որոշումը պաշտպանելու իր քաղաքացիներին եւ պայքարելու ահաբեկչության դեմ, ինչպես նաեւ Սիրիայի բանակի նվաճած հաղթանակներր ՝ որոշ արեւմտյան երկրներ, նրանց դաշնակից արաբական եւ տարածաշրջանային երկրներ, հատկապես Սաուդյան Աբաբիան, Թուրքիան եւ Քաթարը, 2012թ.-ից սկսեցին քարոզել Սիրիայի ժողովրդի դեմ Սիրիայի կառավարության կողմից քիմիական զենքի հնարավոր օգտագործման մասին, ինչը մեզ մոտ կասկած հարուցեց, որ նրանք տեղեկություններ ունեին ահաբեկիչների կողմից քիմիական զենքի օգտագործման մտադրության վերաբերյալ՝ Սիրիայի պետությանը մեղադրելու նպատակով:

Սիրիայի կառավարությունը նամակներ է հղել ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարությանը եւ Անվտանգության խորհրդին, որտեղ զգուշացրել է, որ ահաբեկիչներին աջակցող որոշ երկրներ նրանց տրամադրել են քիմիական զենք՝ Սիրիայում օգտագործելու եւ այդ հանցագործության մեջ Սիրիայի կառավարությանը մեղադրելու նպատակով:

2013 թ. մարտի 19-ին զինված ահաբեկչական խմբերը թունավոր նյութեր կրող հրթիռ արձակեցին Հալեպի շրջակայքում գտնվող Խան Ալ-Ասալ ավանի ուղղությամբ, ինչի հետեւանքով զոհվեց 25 եւ վիրավորվեց ավելի քան 110 զինվոր եւ խաղաղ բնակիչ: Նույն օրը Սիրիան պաշտոնապես դիմել էր ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ՝ միջադեպի վերաբերյալ հետաքննություն անցկացնելու նպատակով չեզոք եւ անկողմնակալ միջազգային տեխնիկական առաքելություն Սիրիա ուղարկելու համար: Այնուամենայնիվ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան եւ Ֆրանսիան խոչընդոտել են առաքելության ժամանումը՝ ներկայացնելով կեղծ ենթադրություններ եւ պնդումներ, որ Սիրիայի այլ տարածքներում Սիրիայի կառավարությունը քիմիական զենք է օգտագործել:

Մոտ հինգ ամիս անց պայմանավորվածություն ձեռք բերվեց Սիրիայի եւ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության միջեւ, որի համաձայն ՄԱԿ-ի առաքելությունը գործուղվեց Սիրիա հետաքննելու քիմիական զենքի օգտագործման շուրջ պնդումները եւ աշխատանքներն սկսեց 19/08/2013 թ. Խան Ալ-Ասալում եւ Սիրիայի հյուսիսային այլ վայրերում: Սիրիայի կառավարությունը համագործակցել է վերոհիշյալ առաքելության հետ բոլոր ուղղություններով՝ ճշմարտությանը հասնելու նպատակով:

2013 թ. օգոստոսի 21-ին, երբ միջազգային առաքելությունը գտնվում էր Դամասկոսում եւ երբ Սիրիայի բանակը դիմադրում է այն ահաբեկչական խմբերին, որոնք պլանավորում էին ներխուժել մայրաքաղաք Դամասկոս, եւ որոնք ամեն օր պատահական ռումբեր եւ հրթիռներ էին արձակում Դամասկոս քաղաքի խաղաղ բնակիչների վրա, ինչի հետեւանքով զոհվում էին հարյուրավոր անմեղ քաղաքացիներ, ահաբեկչական խմբերը եւ նրանց սատարողները Արեւմուտքում եւ տարածաշրջանում սկսեցին պնդել, որ Սիրիայի կառավարությունը օգտագործել է քիմիական զենք Ղութայում եւ Դամասկոսի շրջակայքում:

Այդ միջադեպերի մասին հայտարարելու առաջին պահից ԱՄՆ-ն, նրա դաշնակիցները եւ գործիքներ տարածաշրջանում, հատկապես Սաուդյան Արաբիան, Թուրքիան եւ Քաթարը, տեղեկատվական եւ քաղաքական քարոզարշավ սկսեցին՝ մեղադրելով Սիրիայի պետությանը վերոհիշյալ հանցագործության մեջ՝ միեւնույն ժամանակ անմեղ ներկայացնելով զինված ահաբեկչական խմբերին եւ Ալ-Ղաիդային: Նրանք եզրակացության հասան առանց ՄԱԿ-ի առաքելության կողմից քիմիական զենքի օգտագործման հաստատումը, նույնիսկ ԱՄՆ-ն, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան եւ նրանց դաշնակիցները հայտարարեցին Սիրիայի դեմ ագրեսիա իրականացնելու իրենց մտադրության մասին:

2013 թ. օգոստոսի 25-ին Սիրիայի կառավարությունն անմիջապես համաձայնել է ՄԱԿ-ի պահանջին՝ կապված Ղութայում քիմիական զենքի օգտագործման վերաբերյալ պնդումները հետաքննելու ՄԱԿ-ի առաքելության կողմից: ՄԱԿի զինաթափման հարցերով բարձր ներկայացուցիչ ՝ Անգելա Քեյնի Դամասկոս ժամանումից ավելի քիչ՝ քան 24 ժամվա ընթացքում համաձայնություն է ձեռք բերվել առաքելության պահանջով չորս վայրեր այցելել՝ տեղում հետաքննություն անցկացնելու նպատակով: Սիրիայի կառավարությունը ցուցաբերել է առավելագույն ճկունություն, թափանցիկություն, պարտավորվածություն եւ պատասխանատվություն՝ ելնելով ճշմարտությանը հասնելու իր ձգտումներից: Առաքելությունը աշխատանքներն սկսել է համաձայնեցված վայրերում անմիջապես երկրորդ օրը՝ կոորդինացնելով Սիրիայի կառավարության հետ: Սիրիան կատարել է իր բոլոր խոստումները եւ երաշխիքները ՝ առաքելության աշխատանքը հաջող ավարտելու համար:

ՄԱԿ-ի առաքելությանը Սիրիայի ցուցաբերած ճկուն համագործակցության արագ բացառումը Ամերիկայի Միացյալ Նահանգների, նրա դաշնակից արեւմտյան, տարածաշրջանային եւ արաբական որոշ երկրների կողմից ցույց է տալիս Սիրիայի դեմ նրանց ագրեսիվ կանխամտածված արեւմտյան մտադրությունները, ինչպես նաեւ նրանց վախը, որ կբացահայտվեն իրենց ստերը, զրպարտությունները եւ դերը ՝ ահաբեկիչներին եւ «Ալ Ղաիդային» միջազգայնորեն արգելված զենք մատակարարելու գործում:

Սիրիայի պետությունը ոչնչացնելու ծրագրի ձախողումն, չնայած ահաբեկչական խմբերին եւ «Ալ Ղաիդային» Արեւմուտքի եւ տարածաշրջանային որոշ երկրների կողմից տրամադրված հսկայական ֆինանսավորման եւ զինման, Ամերիկային եւ նրա դաշնակիցներին ստիպել է օգտագործել քիմիական զենքի պատրվակը ՝ վերոհիշյալ ծրագիրը ավարտին հասցնելու նպատակով: Հեռու չէ Ամերիկայից եւ նրա դաշնակիցներից մոլորեցնել միջազգային հանրային կարծիքը, հնարել ստեր եւ ստեղծել պատրվակներ այլ երկրների ներխուժման համար ՝ միջազգային փոխհամաձայնությունից դուրս, ինչպես արդեն արել են Իրաքում:

Սիրիայի կառավարությունը չի օգտագործել քիմիական զենք եւ բոլոր հանգամանքներում չի օգտագործի սեփական ժողովրդի դեմ՝ ելնելով բարոյական, իրավական, քաղաքական ու հումանիստ նկատառումներից եւ ընդգծում է, որ քիմիական զենքի օգտագործումից օգտվող միակ կողմը զինված ահաբեկչական խմբերն են, «Ալ Ղաիդան» եւ նրանց աջակիցները: Սիրիան պահանջում է պատժել ահաբեկիչներին ու նրա աջակիցներին, ովքեր օգտագործել են այդ զենքը: Սիրիան ի դեմս արտաքին գործերի նախարարի կոչ է արել նրանց, ովքեր Սիրիայի բանակին մեղադրում են այս անբարոյական զենքի օգտագործման մեջ, հասարակական կարծիքի առջեւ ներկայացնել ապացույցներ նրանց մեղադրանքների վերաբերյալ:

Սիրիայի նկատմամբ ագրեսիայի սրացումը, ինչպես նաեւ սպառնալիքների լեզվով խոսելը ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ նրանց դաշնակիցների կողմից, հրատապ եզրակացություններ անելը, մեղադրանքներ ներկայացնելը, ապացույցների կեղծումը՝ Սիրիայի պետության կողմից քիմիական զենք օգտագործելու վերաբերյալ ապացույցների բացակայության պարագայում, նպատակ ունեն խաթարել ՄԱԿ-ի առաքելության աշխատանքը, ինչպես եղավ գեներալ Մոդի ղեկավարությամբ ՄԱԿ-ի առաքելության եւ արաբ դիտորդների խմբի հետ, ձախողել բոլոր միջազգային ջանքերը Սիրիայի ճգնաժամի համար քաղաքական լուծում գտնելու գործում եւ միեւնույն ժամանակ բարձրացնել զինված ահաբեկչական խմբերի եւ «Ալ Ղաիդայի» բարոյական ոգին, ամրապնդել Իսրայելի անվտանգությունը\` Սիրիայի պաշտպանական կարողություններին հարվածելու միջոցով: Այս ամենն առանց որեւէ կասկածի բացահայտում է Սիրիայի դեմ ամերիկա-արեւմտյան ագրեսիայի նախագծի իրական մտադրությունները:

- Սիրիայի դեմ որեւէ ագրեսիա հարված կլինի ՄԱԿ-ին, նրա կանոնադրությանը, վստահելիությանը եւ դերին՝ միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանման գործում: Բացի այդ, տարածաշրջանային որոշ երկրների, հատկապես Սաուդյան Արաբիայի, Թուրքիայի եւ Քաթարի աջակցությամբ արեւմտյան երկրների կողմից ուժի կիրառումը Սիրիայի դեմ այսօրվա աշխարհին հետ է բերում գաղութային տիրապետության տրամաբանությունը, եւ այդպիսով սպառնում զարգացող երկրների անվտանգությանը, ինքնիշխանությանը եւ անկախությանը, ինչը նրանցից պահանջում է միացնել ներքին եւ միջազգային դիրքորոշումները ՝ այդ արեւմտյան ագրեսիվ ծրագրերը խափանելու համար:


## Ընդունելությունը Մանկավարժականում շարունակվում է

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը շարունակում է 2013-2014 ուսումնական տարվա մագիստրոսական ծրագրի հեռակա ուսուցման ընդունելությունը 3 մասնագիտությունների գծով՝ հայոց լեզու եւ գրականություն, մանկավարժություն եւ մեթոդիկա /տարրականնկրթություն/, իրավագիտություն /մանկավարժություն/:

Ի դեպ, Մանկավարժական համալսարանում ուսմանվարձերը չեն թանկացել:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ սեպտեմբերի 20-ը:

Ընդունելության մասին հավելյալ տեղեկատվություն կարող եք ստանալ armspu.am կայքի «Դիմորդ» բաժնից կամ զանգահարելով 59-70-69 հեռախոսահամարով:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ՇՏԱՊ վաճ. է 3 սեն. բն. Դեմիրճյան 27/1 բն. 30 հասցեում, 5 հարկանի քարե շենքի բարձր 1-ին հարկում: Վերանորոգված, տաք եւ սառը ջուր, 2 նկուղ, ավտոկայանատեղ, կահավորված: Հնարավոր է կահույքով եւ առանց կահույքի: Ունի առաջ գնալու մեծ հնարավորություն: Գինը՝ 120.000 $-ին համարժեք դրամ: Մակերեսը՝ 80.3 քմ:

Հնարավոր է օրավարձով՝ գինը՝ 50 $-ին համարժեք դրամ:

Հեռ.՝ 091-58-78-05

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** չեխական «Կարմա» գազի վառարան

**Հեռ.՝ 094-48-68-03**

## Վաճառվում է

4 սեն. բնակարան
Եր. Քոչարի փ.
(եկեղեցու մոտ, 16/11 հ.,
103 քմ), մշտ. ջուր,
հին վերանորոգում, փոխված
էլ. լարեր, 2 պատշգամբ,
գեղեցիկ տեսարան, արեւկող,
գինը՝ պայմանագրային:
Հեռ.՝ 093-505-807,
(010) 222-730

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112


Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 30.8.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: